ԾՐԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Թուրքմենստանի կառավարության միջև մշակույթի ու արվեստի բնագավառում 2023-2025 թվականների համագործակցության

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Թուրքմենստանի կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

համաձայն 1993 թվականի օգոստոսի 24-ի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Թուրքմենստանի կառավարության միջև մշակութային և գիտատեխնիկական համագործակցության մասին Համաձայնագրի,

արտահայտելով իրենց հստակ համոզմունքն այն մասին, որ մշակույթի ու արվեստի բնագավառում համագործակցությունը զարգացնում է ժողովուրդների միջև բարեկամական հարաբերությունները և փոխըմբռնումը,

առաջնորդվելով մշակույթի ու արվեստի բնագավառում փոխշահավետ համագործակցություն զարգացնելու և այն կատարելագործելու ընդհանուր ցանկությամբ,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Կողմերը կձգտեն ստեղծել բարենպաստ պայմաններ՝ մշակույթի և արվեստի բնագավառում երկկողմ համագործակցության համար:

Հոդված 2

Կողմերը կզարգացնեն համագործակցությունը երաժշտության, պարարվեստի ոլորտում՝ համերգային կազմակերպությունների և ստեղծագործական միությունների միջև, ինչպես նաև կփոխանակվեն կատարողներով, երաժշտական ու խորեոգրաֆիկ կոլեկտիվներով և կնպաստեն

փոխադարձ մասնակցությանը՝ Կողմերի պետությունների տարածքներում անցկացվող միջազգային մրցույթներին ու փառատոներին:

Հոդված 3

Կողմերը կսատարեն երկու պետությունների թատրոնների միջև շփումների հաստատմանը՝ ցուցաբերելով կազմակերպչական աջակցություն՝ հյուրախաղերի և թատերական կոլեկտիվների ու առանձին կատարողների ելույթների անցկացման, ինչպես նաև թատերական փառատոներին փոխադարձության սկզբունքով մասնակցության գործում:

Հոդված 4

Կողմերը շահագրգռվածություն են արտահայտում Հայաստանի Հանրապետության և Թուրքմենստանի թանգարանների ու պատկերասրահների միջև համագործակցության հաստատման գործում՝ թանգարանային գործի բնագավառում փորձագետների, տեղեկատվական նյութերի, ինչպես նաև թանգարանային գործի ոլորտում գիտական համաժողովների ու սեմինարների վերաբերյալ տեղեկությունների փոխանակման միջոցով:

Կողմերը կաջակցեն թանգարանային ցուցահանդեսների, այդ թվում՝ ժամանակակից արվեստի ցուցահանդեսների կազմակերպմանը:

Հոդված 5

Կողմերը կաջակցեն երկու պետությունների գրադարանների միջև համագործակցության, սեմինարներին ու համաժողովներին փորձագետների մասնակցության, գրքերի ցուցահանդեսների կազմակերպման զարգացմանը, ինչպես նաև մեթոդական և մատենագիտական նյութերի փոխանակմանը:

Հոդված 6

Կողմերը կձգտեն ստեղծել բարենպաստ պայմաններ՝ երկու պետությունների կինեմատոգրաֆիայի ոլորտում կազմակերպությունների միջև համագործակցության համար:

Հոդված 7

Կողմերը կհամագործակցեն մշակութային ոլորտում կրթության բնագավառում և կաջակցեն ուսանողների մասնակցությանը՝ Կողմերի պետությունների տարածքում անցկացվող միջազգային մրցույթներին ու փառատոներին:

Հոդված 8

Կողմերը կսատարեն համագործակցությանը՝ պատմամշակութային ժառանգության օբյեկտների պահպանության և վերականգնման ոլորտում:

Հոդված 9

Կողմերը կհամագործակցեն ժողովրդական ստեղծագործության ոլորտում և կաջակցեն այդ բնագավառում փորձագետների փոխանակմանը, ինչպես նաև միմյանց կտեղեկացնեն երկու պետություններում անցկացվող միջազգային ֆոլկլորային փառատոնների մասին և կնպաստեն իրենց ներկայացուցիչների մասնակցությանն այդ միջոցառումներին:

Հոդված 10

Կողմերը կաջակցեն Հայաստանի Հանրապետությունում Թուրքմենստանի մշակույթի օրերի և Թուրքմենստանում Հայաստանի Հանրապետության մշակույթի օրերի անցկացմանը:

Հոդված 11

Կողմերը կաջակցեն Կողմերի համապատասխան գերատեսչությունների, հիմնարկների և կազմակերպությունների միջև ուղղակի շփումների հաստատմանը՝ Կողմերի պետությունների օրենսդրություններին համապատասխան:

Հոդված 12

Սույն ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցառումների իրագործման պայմանները (ներառյալ ֆինանսական հարցերը) կսահմանվեն երկու պետությունների շահագրգիռ կազմակերպությունների միջև անմիջական երկկողմ խորհրդակցությունների միջոցով՝ հավասարության հիմքով:

Սույն ծրագրի իրագործման շրջանակներում Կողմերը կարող են կնքել Միջոցառումների պլան, որը կկազմի սույն ծրագրի անբաժանելի մասը:

Հոդված 13

Սույն ծրագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման ժամանակ առաջացող ցանկացած տարաձայնություն կամ վեճ կկարգավորվի Կողմերի միջև բանակցությունների և (կամ) խորհրդակցությունների միջոցով:

Հոդված 14

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ սույն ծրագրի մեջ կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրություններով և կկազմեն դրա անբաժանելի մասը:

Հոդված 15

Սույն ծրագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:

Կատարված է Երևան քաղաքում 2023 թվականի մայիսի 31-ին երկու օրինակից, յուրաքանչյուրը՝ հայերեն, թուրքմեներեն և ռուսերեն լեզուներով, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն ծրագրի դրույթների մեկնաբանման ժամանակ տարաձայնությունների դեպքում Կողմերը կառաջնորդվեն ռուսերեն տեքստով:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից	**Թուրքմենստանի կառավարության կողմից**